Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«------» ---------- 2014 թվական N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հավելավճարի չափը սահմանելու մասին» N 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2008» թիվը փոխարինել «2015» թվով, «20 000» թիվը՝ «50 000» թվով, «10 000» թիվը՝ «25 000» թվով.

2) որոշման 2-րդ կետում «2008» թիվը փոխարինել «2015» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հավելավճարի չափը սահմանելու մասին» N 2-Ն որոշման՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար սահմանվել է հավելավճար համապատասխանաբար գիտությունների դոկտորներին 20 000 ՀՀ դրամ, գիտությունների թեկնածուներին՝ 10 000 ՀՀ դրամ:

Ըստ «Պարտադիր սոցիալական վճարների մասին» ՀՀ օրենքի՝ նշված գումարներին ավելացվում էր նաև գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական վճարների գումարը: 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ հարկվող ամբողջ գումարը ներառված է աշխատողին վճարվող վարձավճարի (այդ թվում՝ նաև հավելավճարի) մեջ:

Համաձայն ինչպես ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2015-2017թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 700-Ն որոշման, այնպես էլ ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» N 40 արձանագրային որոշման՝ նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից հավելավճարները սահմանել համապատասխանաբար գիտությունների դոկտորներին 50 000 ՀՀ դրամ, գիտությունների թեկնածուներին՝ 25 000 ՀՀ դրամ:

Գիտական աստիճանի համար հավելավճարի գումարի ավելացումը հնարավորություն կընձեռի ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների աշխատավարձը

տարանջատել այդ ծրագրերի և թեմաների շրջանակներում մեկ հաստիքի համար հատկացվող միջին հաշվարկային աշխատավարձից:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտություն է առաջացել 2008 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հավելավճարի չափը սահմանելու մասին» N 2-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ, որոնցով սկսած 2015 թվականի հունվարի 1-ից կփոփոխվի հավելավճարների գումարները համապատասխանաբար գիտությունների դոկտորներին 50 000 ՀՀ դրամ և գիտությունների թեկնածուներին՝ 25 000 ՀՀ դրամ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե:

4. Ակնկալվող արդյունքը.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը կբարելավի գիտական աշխատողների սոցիալ-տնտեսական պայմանները, կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ և բարձր որակավորում ունեցող կադրերով համալրելուն:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
ՀՀ արդարադատության նախարարություն 2014-11-07 N 01/8529-14	1. Որոշման նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: 2. Նախագիծը համապատասխանում է հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին: 3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն: 4. Իրավական ակտում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունն առկա է: 5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են: 6. Նախագիծն իր մեջ ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում: 7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանված են:		
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա 2014-10-24 N 24-01/377	ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:		
ՀՀ ֆինանսների նախարարություն 2014-10-24 N 01/83-2/18254-14	ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:		